Այո, մինչ ինքնաշարժ կը թաւալի Սամանտաղի գիւղին վրայով, ամէն ինչ բաւական յստակ է: Մուսա Լեբը գարնան լոյսին մէջ նստած է կանաչ ու անվրդով, այնպէս՝ ինչպէս Վերֆէլի վէպին մէջ: Պարզապէս կ'երեւակայէի, թէ անոր ծովահայեց կողմը՝ աւելի ցից պէտք էր ըլլար: Թաքսի աղմուկով կ'անցնի դաշտերուն մէջ բացուած արահետէն: Ուրեմն դէպի լեռն առաջնորդող կուպրապատ ճամբայ չկայ, պատուհանը բանալով կը հարցընէ թաքսի քոչուր կապոյտ տարազով դպրոցական երկու աղջնակներու: Ի վերջոյ պետութիւնը մարդ մը ծխախոտը ձեռքին կը բարձրանայ ինքնաշարժ եւ ցոյց կու տայ ուղղութիւնը: Անասուններու բացած արահետը ոլորապարտոյտ կը բարձրանայ դէպի լեռը: Քանի մը քիչ լոմեթը կարելի է ետք կանգ կ'առնենք մարդուն բնակարանին առջեւ:

Կը հասկնամ «Նուխբար» բառը, որ կը նշանակէ գիւղապետ: Մուսա Տաղի գիւղի մարդ մըն է, բարեկամական նայուածքով, եւ անոր մաշած երկնային գօտիէն ըջիւնային հեռածայն մը կախուած է: Մինչ կը բարձրանանք լեռը, ան շատ արագ թրքերէն մը կը խօսի: Յանկարծ սիրտս մէկ գարկ կը փախցնէ: Կը ընկեմ «Էրմեհան, այսինքն»՝ «Տայ» բառը: Կը յուսամ, որ տեսնի բնիկ պատահի: Մական նոյն վայրկեանին կրկնեցողութիւնը՝ եկեղեցին կը յայտնուի մեր դիմաց, հաստատ առ նիւթեղէն: Եւ անոր վերեւ՝ թրքական դրօշակը, իրբեւ միակ փաստը անոր իրականութեան:

Առանձինս կը քայլեմ եկեղեցիին մէջ: Գրեթէ դատարկ է, սակայն խորանին առջեւ սեղանի մը վրայ բաց գիրք մը կայ: Կը թերթատեմ բարակ էջերը եւ կը մտածեմ Վերֆէլի վէպին մասին: Վերջին անգամ, երբ կարդացի գիրքը, ինծի թուաց, թէ շատ հրեական էր: Վերֆէլ հայկական ինքնապաշտպանութեան իրական պատմութիւնը առանց որեւէ ինքնազգուծման կ'անցնէր հրեաներու եղիպտոսպէս գաղթին պրիմալիէն: 40 օրուան ինքնապաշտպանութիւնը կը յիշեցնէր հրեաներուն 40 տարուան թափառումները: Իրականութեան մէջ Վերֆէլ կը նկարագրէր եգիպտոսէն եւ կրեոտական ճակատագրապաշտպանութիւններէն փախուստ մը: Ան իր վէպին մէջ ընկերային համակարգ մը հիւսած էր Թորայի թելերով: Քաղաքական եւ հոգեւոր առաջնորդ մը կը զիջաւորէր ընտրեալ ժողովուրդի մը պայքարը: յստակ է, ան Մովսէսն էր, մարգարէն, Ահարոնն եւ բարձրաստիճան կրօնաւորը:

Մական վէպը աւելի հեռուն կ'երթար, երբ կը թերթատէի այս օտար Աստուածաշունչին թերթերը: Վերֆէլի հերոսին՝ Գաբրիէլ Բագրատեանին անուով՝ «Կապրիէ էլ» կը նշանակէ Աստուծոյ հերոս: Ան Աստուածաշունչի Մովսէսին նման դրօշակ մըն է, որ իր ժողովուրդէն հեռու ծնած է եւ կը ձգտի դառնալ «վերացական մարդ մը»: Այստեղ եւս Վերֆէլ հաւանաբար պատկերած է ձուլուած գերմանացի հրեայի մը տիպարը:

Արդեօք գեղարուեստի ընդհանուր օրէնքներէն մէկն է ցեղասպանութիւնը պատկերել միայն անուղղակի ձևով, այսինքն՝ պատուամիտ մը վրայով: Եւ անհաւատալի բացառութիւններով: Այսպէս, «Մուսա Լեբան քառասուն օրերը» հիմնականին մէջ կ'առնուի ոչ թէ տեղահանութեան ինքնապաշտպանութիւնը, զանազան գաղթականներու կարաւաններուն,

այլ՝ 5000 հոգիի փրկութեան, թէեւ ամէն պարագայի պէտք է բան մը գիտնանք տեղահան գաղթականներու կարաւաններուն մասին՝ փրկութեան այս պատմութիւնը հետաքրքրական գտնելու համար: Նոյնն է պարագան «Միտլըրը» լիսը՝ ժապաւէնին մէջ, որ ոչ թէ կը ներկայացնէ անյայտ ու թշուառ մահը, այլ՝ հեքիաթային փրկութեան մը պատմութիւնը: Ամէն պարագայի այս անսովորութիւնը կրնար պարզապէս պատահական ըլլալ, եւ գոցեցի Աստուածաշունչը:

Դուրսը, եկեղեցիին բակին մէջ տղամարդիկ կը խնդան: Մուսա Տաղը խճաբար մը նստած է թրթուրի մը վրայ, սակայն թրթուրը տակաւին ողջ է: Թաքսիի ազնիւ վարորդս գայն կը կոխկուտէ եւ մէկ կողմ կը շարտէ: Արդեօք ասոնք վատ մարդիկ են:

Կոստանտնուպոլսէն կարելի է աստղադիտակի մը ոսպնեակին ընդմէջէն դիտելու պէս տեսնել հեռուոր հարթավայրը իր բերրի հողով, տուններով ու գետով: Անոնք ետին Մուսա Տաղի մէջ, եւ աւելի հեռուն՝ Լիբանանը, ապա՝ սահմանի փշաթելերը, որոնց ետին կը տարածուի Խարաշը:

Բ. Աշխարհամարտին, երբ Վերֆէլը կը մտնէր Պարսիստի, հրեական ընդլայնակեալ բանակը ծրագրեց քաշուիլ Ֆարմէլ լեռան բարձունքը եւ հայրենային պատերազմ մղել գերմանացիներուն դէմ: Այս ծրագրին գաղտնի բառը Մուսա Տաղ էր: Կ'ըսուի, թէ նոյնիսկ նացիական մահաշունչ արգելաբաններուն մէջ Վերֆէլի գիրքին բզկտուած օրինակները կ'անցնէին ձեռքէ ձեռք:

Կանկարծ եկեղեցիին դիմացի տան դուռը կը բացուի: Ծերմակ շապիկով մօրուքաւոր մարդ մը դուրս կու գայ գրաւիչ կնոջ մը թեւը անցնելով: Մուսա Տաղը կը մտնէր երկուրէն եւ պայծառ ժպիտով կը բարեկէ, ապա ինծի դառնալով կ'ըսէ. «Էրմեհան»: Ուրեմն հայեր տակաւին կ'ապրին Մուսա Տաղի մէջ:

Մօրուքաւոր մարդը կը հարցնէ, թէ արդեօք ունեւերէ կը խօսիմ: Ոչ, չեմ խօսիր: Երիտասարդ ամուսին ետին տարեց կին մը կ'երեւի դրան մէջ: Անոր շարժումներէն կ'անդրադառնամ, թէ մարդուն մայրն է: Ան ցոյց կու տայ դէպի տուրք քաղուր կորքեամակ եւ մօրուքաւոր տարեց մարդ մը՝ ոչխարի մորթի շինուած գլխարկով: «Մոն փեր», կ'ըսէ՝ ներկայացնելով գայն: Արդեօք կարելի է: Կրնա՞յ ըլլալ, որ ան իրապէս իր հայրն է: Թերեւս այդ օրերուն պարզապէս մանուկ մըն էր: Ո՛ր էր ան 1915ին: Ինչ փորձառութիւնը անպարծ էր, ուրկէ՞ եկած էր ընտանիքը: Հասարակաց լեզու մը չունէինք: Հետեւաբար արեւուն տակ կանգնած անօդանավ կը դիտենք գիրքը:

Մական տակաւին հայեր կ'ապրին Մովսէսի Լեբան վրայ:

Այսօր հաւանաբար անկարելի է «Մուսա Լեբան քառասուն օրերը» չկարդալ իրբեւ գերմանական Երրորդ հանրապետութեան նախնիները պատկերող պատմութիւն մը: Վերֆէլը աւանդական սպանդ մը կամ ջարդ մըն է, որ կը պատկերէ, այլ՝ կատարելագործուած միջոցներով ցեղասպանութիւն մը, որ կազմակերպուած է դիւանակալական սառնասրտութեամբ:

Վէպին անմոռանալի մէկ պարբերութեան մէջ գերմանացի քարոզիչ Եոհանն Լեփսիւս կը տեսակցի Թուրքիոյ պատերազմի նախարար Էնվէր փաշային հետ: Ան երկուցածութիւն առթող անձ մըն է. գրեթէ անկուսակ է: «Այսուհանդերձ Լեփսիւս տեսաւ մարդկային այն սառն դիմակը, որ յաղթահարած էր ամէն զգացում: Այլ խօսքով՝ մարդկային քոչարկուած մտքի դիմակը, որ անցած է յանցանքի եւ խղճահարութեան բոլոր զգացումներէն անդին, անաստուծութեան տարօրինակ եւ գրեթէ անմեղ միամտութեան դիմակը: Եւ ինչ ուժ ունէր այդ դիմակը, որ մարդ չէր կրնար ատել գայն», կը գրէ Վերֆէլը:

Շուրջ կանգնած մարդիկ այս բեւեռային առնուութեան նշոյլները չեն կրեր: Ժպիտի կնճիւններ, պիտեր եւ մեղմ սրճագոյն աչքեր ունին անոնք: Այժմ արդէն քաշ ետք դէպի անմեղ մտիկ դիւրը. թաքսիին վարորդը, ընդմիջում միացող ծխախոտով մարդը եւ եւ: Գիւղին փոքր հրապարակին վրայ մեզ կը դիմաւորէ երկրորդ մուսա Տաղը: Իր սպիտակ եւ ծովափիդի պիտերով ան կը նմանի հարաւամերիկացի մեծարձակ:

Երկնագոյն բամբակէ ծածկոց մը սփռուած է փայտէ սեղանին վրայ ի յարգանս ինծի: Փայտէ աթոռներ բերուած են: Արդեօք ունեւեր՝ թէյ խմելու: Լեռնային գոյ ու վճիտ առուակ մը կը հոսի գիւղին հրապարակին քովէն: Մէկ կողմը կանգնած է Գեմալ Աթաթուրքին պրոնզէ կիսանդակը, որուն վերեւ կը ծածկէ թրքական գեղեցիկ կարմիր դրօշակը: Հնադարեան այլապէս կարելի մը, գործեղած է կայծակը, իր շուրջ կը տարածէ մեր

վրայ: Չափահաս մարդ մը մանչուկի պէս կը մազցի նարնջենի մը եւ հիւթեղ պտուղներ կը քաղէ:

Կանաչ է չորս կողմը: Կանաչ ու խաղաղ: Ֆրանց Վերֆէլի ճիշդ կ'ըսէ, երբ կը նկարագրէ դրախտին արտացոլացումը Մուսա Տաղի մէջ: Շաքարի կտորներ կը խառնեմ թէյիս մէջ: Չեմ հասկնար, թէ շուրջ նստած մարդիկ ինչ կ'ըսեն, եւ երբեմն ականջիս մէջ կը գամուի «Ալաման» (գերմանացի) բառը: Օտարութեան պատեանին մէջ ամփոփուած՝ դարձած եմ վերացական մարդ մը եւ կը սկսիմ յուզիչ ուղերձ մը գարգացնել մտքիս մէջ:

«Դուք, սիրելի թուրքեր, - կ'ըսեմ, լուռ խօսքս ուղղելով շուրջ նստած մարդոց, - դուք հրէշներ չէք: Գաւազանով քալող կոյր մը պիտի տեսնէր ասիկա: Դուք ջերմ էք եւ հիւրասէր, գիտ կը հիւրասիրէք թէյով եւ նարինջով եւ յաճախ ձեր պատմութեան մէջ նոյնքան հիւրասէր եղած էք: Երբ կաթոլիկ սպանացիները հրեաները դուրս քշեցին 1492ին, Բարձր Դուռը բացաւ իր դարպասները եւ ընդունեց գաղթականները: Բ. Աշխարհամարտին սկիզբը դուք չէք գիտէիք, սակայն իրականութեան մէջ ապաստան եւ գործ տուիք նացիական Գերմանիայէն խոյս տուած բազմաթիւ գաղթականներու: Այս բաները կարելի չէ մոռնալ:»

Ումպ մը թէյ կը խմեմ եւ կը շարունակեմ. «Սակայն ճիշդ այդ պատճառով է, որ չափազանց անմիտ կը նկատեմ ձեր պետութեան կողմէ ձեր բաճկոններուն վրայ արեան իւրաքանչիւր կաթիլը ծածկելու ճիգը: Պարզապէս տեսէք գերմանացիները: Անոնք ցարդ յոռեգոյն ցեղասպանութիւնը գործած են: 1945էն ետք անոնք չ'փախցին իրենց արարքը (ինչ որ ամէն պարագայի անկարելի պիտի ըլլար): Ընդհանուրապէս, անոնք որոշ հատուցում վճարեցին, իսկ շատեր, որոնք ոչինչ կրնային ընել, այնուամենայնիս խորապէս գողացան: Իսկ ասիկա վնաս պատճառեց իրենց: Ընդհանուրապէս հաւանաբար գերմանացիները որեւէ ժամանակ աւելի սիրուած են այսօր: Հայկական Յեղասպանութեան ժխտումը ձեզ չի գորացնէր, այլ աւելի կը փոքրացնէ:»

Արդեօք մուսա Տաղը գաղափար ունի, թէ ինչ կը մտածեն: Կը ժպտի ինծի եւ ակուսները կը լիզէ ծովափիդի պիտերուն տակ: Ես ալ կը ժպտիմ եւ մատներուս վրայ հոսած նարնջի հիւթը կը լիզեմ: «Աւելի լաւ պատճառ մըն ալ կայ, թէ ինչու պէտք է ի վերջոյ դադրէք ձեռացնելէ, թէ հայերու ջարդ երբեք տեղի չէ ունեցած: Ֆրանց Վերֆէլ իր վէպին ձեռագիրին էջերէն մէկուն անկիւնը գրած է նոթ մը. «Կարելի չէ վիճել թուրքերուն դէմ»: Ան համոզուած էր այս գաղափարին: Հետեւաբար ան նաեւ գրած է իթթիկատական վարչակարգին ընդդիմադիրներուն մասին: Ան կը գրէ նաեւ այն թուրքերուն մասին, որոնք գաղթականներու թաքսոց կու տային եւ զանոնք կը կերակրէին պանիրով ու կաթով, եւ որոնք բարի ու մարդկայնական վերաբերում կը ցուցաբերէին: Այս հերոսական արարքները պէտք է ի յայտ բերուին: Մական անոնք կը մնան մոռնի մէջ, այնքան ատեն որ ձեր պետութիւնը կը ժխտէ ցեղասպանութիւնը:»

Նարնջի կեղեւի փոքր դէզեր կ'աղտոտեն սեղանի ծածկոցը եւ թէյի բաժակները արդէն դատարկ են: Աւարտած եմ լուռ ուղերձս եւ կը պատրաստուիմ մեկնելու: Ժպտի կնճիւններ, պիտեր եւ մեղմ սրճագոյն աչքեր կը տեսնեմ: Կը թօթուեմ իւրաքանչիւրին ձեռքը եւ կ'ըսեմ. «Մալամ ալայքում» (խաղաղութիւնը ձեզի հետ):

Յաջորդ Չորեքշաբթի 2002ի Ապրիլ 24ն է: Այս թուականին աշխարհի տարածքին հայեր կը լիչեն մոռցուած, ժխտուած, թաղուած ցեղասպանութիւնը, որ կ'ամուսին գործադրուեցաւ թալէպի պէյի եւ ինչ կողմի վաշայի կողմէ, 1915ին: «Նպատակը բնաջնջումն է»: Հայերը կալանաւորներու նման բանտարկուած են իրենց ցաւին եւ իրենց մեղքաւոր լիշողութիւններուն դառնութեան մէջ: Այս բանտին բանալին կրնայ թուրքերուն ձեռքն է: Միայն անոնք կրնան հայերը փրկել իրենց մեղքներէն:

Եւ ահա համեստ առաջարկ մը. բաւարար ժամանակ կայ մինչեւ 2005ի Ապրիլը Ֆրանց Վերֆէլի «Մուսա Տաղի քառասուն օրերը» վէպին հիմամբ ժապաւէն մը պատրաստուելու համար: Կարելի է հրաշալի ժապաւէն մը նկարահանել նոյնինքն Մուսա Տաղի մէջ, գոր տեսայ: Թերեւս Միւսիւրի Սփիլլարի պիտի հետաքրքրուէր այս նիւթով: Սակայն աւելի գեղեցիկ պիտի ըլլար, եթէ թուրք բեմադրիչ մը պատրաստէր գայն:

Պատրաստեց՝
Լ. ԿԻՒՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԺՈՂՈՎԻՆ

Հ.Մ.Մ. ՄՏԱՅԱԻ ԾԱՆՐ ՊԱՏԻՇՆԵՐ

Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնը, իր գումարած վերջին ժողովին, քննել է ետք Հ.Մ.Մ. - Ահտ մրցումին արձանագրուած հարցերը, ծանր պատիժներ տնօրինեց Հ.Մ.Մ.ի դէմ: Ակուսւոր ենթարկուեցաւ երկու միլիոն իրանական ոսկի առկանքի, որովհետեւ անոր համակիրները հայիոյած էին իրաւարարին եւ ֆետերասիոնին:

Խումբին պատասխանատուներէն՝ Պետրոս Գորգճեան մէկ տարիով կախակայուեցաւ եւ անոր արգիլուեցաւ դաշտ մուտք գործել այդ ժամանակամիջոցին՝ նոյն պատճառով:

Համլէթ Միխրաբեան մէկ ամիսով կախակայուեցաւ, մրցակից կազմի մարզիկ մը հարուածած ըլլալուն համար: Մէկ ամիսով կախակայուեցաւ նաեւ Հիւսէյն Խալիլ, իրաւարարին հանդէպ ոչ ամբարձարել կեցուածք ցուցաբերած ըլլալուն համար:

Անսար եւ Պրոժ եւս իրենց համակիրներուն պատճառով, չորսական միլիոն իրանական ոսկի տուգանքի ենթարկուեցան:

Մէկ մրցումով կախակայուեցաւ Սաժէսի մարզիկ Վարդան Ղաչարեան իր երրորդ դեղին քարտը ստացած ըլլալուն համար: Ան պիտի բացակայի Կիրակի, 5 Մայիսին Սաֆայի դէմ տեղի ունենալիք մրցումէն:

Բ. դասակարգի ֆուտբոլի փոխեանութեան աւարտով, Ա. դասակարգ բարձրացող երկու խումբերը կ'ըլլան՝ Օլիմպիք եւ Մապարա:

Ստորեւ՝ 24րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (որ կրած է կարգ մը փոփոխութիւններ) եւ Լիբանանի ֆուտբոլի բաժակի մրցաշարքին կիսաարտական հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ՇԱՐՔԹ, 4 ՄԱՅԻՍ	Ժամ	Գաշտ
Պրոժ - Ռասիճկ	4:45ին	Մ. Աւան
Անսար - Ահտ	4:45ին	Պէյրուք
Ահլի Սալա - Ա. Ալէյ	4:45ին	Պ. Համուտ
Սալամ - Հ.Մ.Մ.	4:45ին	Թրիփոլի

ԿԻՐԱԿԻ, 5 ՄԱՅԻՍ	Ժամ	Գաշտ
Սաժէս - Սաֆա	4:45ին	Պ. Համուտ
Հ.Մ.Մ. - Թատ. Սուր	4:45ին	Պէյրուք
Նըժմէ - Շապ. Սաիէլ	4:45ին	Մ. Աւան

ԶՈՐԵՔՇԱՐՔԻ, 8 ՄԱՅԻՍ	Ժամ	Գաշտ
(Լիբանանի ֆուտբոլի բաժակ)		
Անսար - Հ.Մ.Մ.	8:30ին	Մ. Աւան
Ահտ - Թատ. Սուր	8:30ին	Պէյրուք

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒԻ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻ

ԴՊՐԱՅ ԴԱՍԻ 66ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ Ա. ՊԱՏԱՐԱԳ

Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցոյ դպրաց դասի 66ամեակին առիթով, Ս. եւ Աճմահ պատարագ պիտի մատուցուի Կիրակի, 5 Մայիս 2002ին:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը մերկայ գտնուելու այս հոգեպարար արարողութեան:

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴՊՐԱՅ ԴԱՍԻ ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Homenetmen

Come and have fun with our Unique Adventures For All Ages

EXTREME ADVENTURE

C U There..... Lots Of Surprises

The Event is Held on May 3 - 4 - 5 & 6, 2002

@

Down Town Beirut, Martyr's Square

«ՉԷՄՓԻՐԸՆԶ ԼԻԿ»

ՊԱՐՍԵԼՈՆԱ ԸՆՏԵԻԵՑԱԻ ՄԱՆՉԵՍԹԸՐԻ ՕՐԻՆԱԿԻՆ

«ՉԷմփիրնչ Լիկ»ի ֆուտբոլի մրցաշարքին կիսաարտական հանգրուանի դարձի մրցումին, Ռէյալ Մատրիտ իր դաշտին «Սանթիակո Պետնայէթ»ի մէջ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Պարսելոնայի հետ, ապահովեց աւարական մրցումին իր տուժը: Անկա յառաջիկայ Մայիս 15ին Կլապրոյի (Սկոտլանդ) «ՉԷմփիրնչ Փարք»ի դաշտին մէջ կը ձևակտի Պալէր Լէւերքուլընի դէմ, որ դուրս ձգած էր Մանչեսթըր Եունայթըտը:

Ռէյալ Մատրիտ - Պարսելոնա մրցումէն առաջ, դաշտին մտակայ վայրի մը մէջ պատահեցաւ պայթում մը, ձգելով այն տպաւորութիւնը, թէ մրցումը կրնայ յետաձգուիլ: Սակայն, ապահովութեան

պատասխանատուներ, ոստիկանութիւնը, ակումբին եւ եւր. Է. Է. Ֆ. Ա. ին պատասխանատուները արագ ժողով մը գումարելով, որոշեցին մրցումը սկսել իր որոշուած ժամկէտին:

Որք անգամ Երոպայի բաժակին («ՉԷմփիրնչ Լիկ») տիրացած Ռէյալ Մատրիտ, 75 հազար համակիրներուն ներկայութեան, բացաւ մրցումին հաշիւը, շնորհիւ Ռաուլ Կոնչայէսի նշանակած կողին (43րդ): Բ. կիսաշարքին սկիզբը (48րդ), Իվան Հելկուէյրայի կողմէ նշանակուած կողը (սխալմամբ իր բերդէն ներս), պատճառ դարձաւ, որ արդիւնքը հաւասարի (1-1) եւ այդպէս ալ աւարտի:

ԵՆՍ ՆՈՎՈՒԹՆԻ

ՊԻՏԻ ԲԱՅԱԿԱՅԻ ՄՈՆՏԻԱԼԷՆ

Գերմանիոյ ֆուտբոլի ազգային խումբին միջազգային յետապահ Ենս Նովոթնի, որ անցեալ Երեքշաբթի օր Պայէր Լէւերքուլըն - Մանչեսթըր Եունայթըտ մրցումին («ՉԷմփիրնչ Լիկ») վիրաւորուեցաւ, իր մասնակցութիւնը պիտի չկարենայ բերել 2002ի Մոնտիալին, որ տեղի պիտի ունենայ Ճապոնի եւ Հարաւային Բորնէյի մէջ, յայտնեց Գերմանիոյ ֆուտբոլի ազգային խումբին մարզիչ Ռուտի Վեյլըր, երկկիր կատարած յայտարարութեան ընթացքին: Լէւերքուլընի 28 տարեկան յետապահը, իր աջ ոտը ծանրօրէն վիրաւորեց այդ մրցումին: Շատ հաւանաբար, ան այս շաբաթ ենթարկուի ծունկի վիրաբուժութեան: Եթէ այդ մէկը տեղի ունենայ, ըստ բժշկներուն, ան վեց ամիս պիտի բացակայի դաշտերէն:

Կորան Էրիքսըն, որ սկզբունքով 2002ի Մոնտիալի իր վերջնական կազմը պիտի յայտարարէր յառաջիկայ Մայիս 7ին, այժմ այդ մէկը պիտի չկարենայ իր պիտի յայտարարել երկու օր ետք, կը յայտնէ Անգլիոյ ֆուտբոլի ֆետերասիոնը: Ըստ ֆետերասիոնին մէկ պատասխանատուին, երկու օրուան այդ ուշացումը պիտի ըլլայ, որովհետեւ ան պիտի ապաւէ բարձրագոյն դասակարգի փոխեանութեան վերջին երկու մրցումները, որոնք տեղի պիտի ունենան, առաջինը՝ Մանչեսթըր Եունայթըտի



Ենս Նովոթնի (ձախից)

եւ Արսենալի, իսկ երկրորդը՝ Լիվըրպոլի եւ Պլեյքոբըրնի միջեւ:

Շարք՝ էջ 10

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ **ՎԱՆԱՅ ԶԱՅՆ**

Այսօր՝ Ուրբաթ, 3 Մայիսին կէսօրէ ետք ժամը 2:00ին կրնաք լսել մեր հարցազրոյցը Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան փոխ նախարար **ԱՐԹՒՐ ԱՂԱԲԷԿԵԱՆԻ** եւ հայրենի ծանօթ գրագէտ, հրատարակագիր **ԶՕՐԻ ԲԱՄԱՅԵԱՆԻ** հետ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԵԱՒՈՐ ՄԻՋԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԻ ՓԱՌԱՏՕՆ

Մասնակցութեամբ՝ **ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅ ԿԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 4 Մայիս 2002ին, կեսօրէ ետք ժամը 4:00ին, Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ:

●Տոմսերը ստանալ ելոյթի օրը կ'իջեմ:

ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ՎԱՐՃԱՐԱՆ

Տնօրէնութիւնս կը յայտարարէ, թէ սկսած են 2002-2003 դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները, 6 Մայիս 2002ին սկսեալ, ամէն օր առաւօտեան ժամը 8:00էն 14:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Դիւրացնելու համար վերամուտի գրասենեակի աշխատանքները՝ արձանագրութիւնը պարտադիր է ներկայ աշակերտութեան:

Հայ վաւկին տունն է հայ դպրոցը, ուր մօրը կարծիքն ան, ան կը սնանի հայ ոգիով, կը ստանայ աիշը իր հայեցի պատկանելութեան եւ կը դառնայ չորս լեզուներով պարգացած, ապագայի օգտաշատ հայ, քրիստոնեայ, տիպար քաղաքացի:

Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնութեան թուղթի լուսապատճէն կամ իրարած քայտ, մկրտութեան վաւերագիր, պատուաստներու եւ առողջ վիճակի վկայագիր եւ 4 լուսանկար:

2002-2003 տարեշրջանին եւս մանկապարտեպի փոքրիկներուն կը մատակարարուի նախաձայ եւ ճաշ, վարժարանին կողմէ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԷՆ. ՊԻ. ԷՅ. - ՓԼԵՅՕՖԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ ՕՐԼԱՆՏՕ ՄԵԾԻՔ ԶԿՐՑԱԻ ԶԱՍՆԻԼ ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆԻՆ

Էն. Պի. Էյ.ի փլեյօֆի (քառորդ աւարտական) երէկուան մրցումներուն, տեղի ունեցան հետաքրքրական երկու ճակատումներ, որոնց ընթացքին կարեւոր յաղթանակներ արձանագրեցին Ֆիլատելիա Սիքսըրը եւ Սիէթլ Սուփըրսոնիքս, այլապէս պարտութեան մը պարագային անոնք կրնային դուրս մնալ, պարտուելէ ետք 3-1 արդիւնքով:



Էլըն Այվըրսըն

Սիքսըրը իր դաշտին վրայ 83-81 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Պոսթըն Սէլթիքսը, պարտադրեց ինչգերորդ եւ վերջին մրցում մը, արդիւնքը 2-2 հաւասարեցնելէ ետք:



Կերի Փէյթըն (աջից) որ կը փորձէ գերազանցել մրցակից կազմին մէկ մարզիկը:

Նոյն բանը յաջողեցաւ իրագործել Սիէթլ Սուփըրսոնիքս, իր դաշտին վրայ 91-79 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Սան Անթոնիօ Սփըրըք:

Սիքսըրը պարտութեան յաղթանակին մէջ իր մեծ բաժինը ունեցաւ Էլըն Այվըրսըն, որ վերջին 73 երկվայրկեանին ընթացքին նշանակեց ութ կէտ: Արցումին աւարտին ան նշանակեց 28 կէտ:

Սիէթլի մէջ, Սիքսըրը, որ դաշտ ներկայացած էր առանց Թիմ Տանքընի եւ Տէյվիտ Ռոպինսոնի, գրեթէ ոչինչ կրցաւ ընել: Յաղթական կազմին մարզիկներէն Կերի Փէյթըն նշանակեց 28 կէտ, 12 ռիպաուսն եւ 11 էսիսը: Փլէյօֆի մրցումներուն, ախապէս Փէյթըն այսքան մեծ իրագործում մը չէր կրցած կատարել:

Օրլանտօ Մէյճըք իր դաշտին վրայ 102-85 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Շարլոթ Հոնտէքցէն, չկրցաւ հասնիլ կիսաարտականին, 3-1 արդիւնքով պարտուելէ ետք: Հոնտէքցի մարզիկ Պէյրըն Տէյվիս նշանակեց 28 կէտ, 11 ռիպաուսն եւ 10 էսիսը:

Ինտիանա Փէյթըրը իր դաշտին վրայ 97-74 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Նիլ Զըրպի Նեթը, անոր պարտադրեց ինչգերորդ մրցում մը: Հինգերորդ մրցումին յաղթանակ արձանագրող խումբը, կիսաարտականին պիտի ձևակտի Շարլոթ Հոնտէքցի դէմ:

ԿԻՍԱՍԱՐԿԱՒԵԱԳԱՅ ԵՒ ԴՊՐԱՅ ԶԵՆՈՒԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

Ուրախութեամբ կը յայտարարենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ յառաջիկայ Կիրակի, 5 Մայիս 2002ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ յընթացս Ս. պատարագի տեղի պիտի ունենայ դպրեվանքի սաներու Դպրաց եւ Կիսասարկաւագաց ձեռնադրութիւնը:

Զեռնադրութիւնը պիտի կատարէ, պատարագէ եւ քարոզէ՝

ԳԵՐԸ. Տ. ԿԱՐԱՆ ԱՐԸ. ՏԵՍԻՐՃԵԱՆ

Արարողութեանց պիտի հանդիսապետէ՝

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 8:00ին Ս. պատարագ՝ ժամը 10:00ին Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը իր ներկայութեամբ քաջալեր հանդիսանալու մեր սաներուն ծառայական կեանքի այս կարեւոր հանգրուանին:

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՏԱՐԵՂԱՐՉԻ ԼԱՄԱԳՈՅՆ ՆՈՒԲԸ

VIDEOՅԻ ԿԱՍ ՇՈՒ ԿՐԱՅ VIDEO CLIPՆԵՐ

ԱՆՉԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ԲԷԲԵՃԵԱՆ ՀԱՍ. Հեռ. 01 / 261696, 03 / 250518

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարունակում 3րդ էջէն

թիւնը: Հիրքնայած է Համազգայինի խումբեր, անոնց համար կազմակերպած է ձեռնարկներ, ինչպէս նաեւ դէպի սփիւռք գործուող է ուսուցիչներ, խումբեր ու մտաւորականներ:

Քարոզչական աշխատանքը չէ ստացած տակաւին անհրաժեշտ ծաւալը:

Վերջապէս, վերամշակուած է Գ. Պատգամաւորական ժողովին կողմէ բանաձեւում մշակութային ուսումնական աշխատանքի նախագիծը, որ մասը յաւելումներով որդեգրուեցաւ սոյն՝ Գ. ժողովին կողմէ:

ՀԱՅԱՍՏԱՆ

Նկատելու ենթադրելով Հայաստան-Սփիւռք օրէ օր արագացող մշակութային և կրթական կապերը, անելի լայն հնարավորութիւններ ստեղծել Համազգայինի Հայաստանի գրասենեակին համար, որպէսզի ան կարենայ իրագործել անհրաժեշտ աշխատանքները՝ Հայաստանի եւ Արցախի հայկական գաղութներում մէջ, իր այժմու ընթացիկ աշխատանքները կողքին, որոնց կարգին՝ սերտացնել կապերը հայրենի մտաւորականներուն եւ արուեստագետներուն հետ:

Երկխոսութեան կարելիութիւն ստեղծել սփիւռքի եւ հայրենի մտաւորականութեան միջեւ՝ հասարակաց հետաքրքրութեան առարկայ հանդիսացող կարգ մը հարցերու շուրջ, ինչպիսիք են Մէքրոպեան ուղղափառութեան եւ հնչիւնային համակարգը վերականգնելու հարցերը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

Համակարգել Կ.Վ.ի եւ շրջաններու գործունէութիւնը: Բոլոր շրջանները հաղորդակից դարձնել մասնագիտութեան աշխատանքներուն: Աշխարհագրականօրէն մերձակալ շրջաններուն համար սերտ գործակցութեան կարելիութիւններ ստեղծել:

Ընդհանրացնել մասնագիտական միատրոններով գործելու դրոշմները՝ մշակողը ժողովրդականացնելու համար:

Գործելաձեւերը տարբերակել ըստ շրջաններու տեղական պայմաններուն՝ որդեգրելով ապատու անկաշակունց գործելու սկզբունքները:

Ուսումնասիրել շրջաններում մէջ մշակութային հիմնարկներ հաստատելու կարելիութիւնները եւ արդէն իսկ գոյութիւն ունեցող հիմնարկներու միջեւ յարաբերութիւնները սերտացնել:

Տէր կանգնել սփիւռքային մտաւորականներու ժամանակութիւնը կազմող արհիւներուն:

Ամերիկեան ցամաքամասին վրայ ուսուցչաց մը իմնելու որոշումը պահել ի պօրով՝ կախեալ նիւթական միջոցներու առկայութենէն:

ԲԱԳԻՆ

Գրականութեան կողքին՝ «Բագին»ը կարելու տեղ տայ նաեւ արուեստի ու մշակութային այլ բնագոտիներ: Առ այդ խմբագրական աշխատանքին մէջ ապահովել ներդրումը հեռանկատ մտաւորականներու ու արուեստագետներու:

«Բագին»ը իր շուրջ համախմբել կարող սիրայօժար երիտասարդներ՝ անոնց միջոցաւ բովանդակութեան մէջ թարմութիւն բերելու եւ ի վերջոյ պարբերաբար խմբագրական շարունակականութիւնը ապահովելու համար:

Ապահովել «Բագին»ի սփռումը:

Ն. ՓԱԼԱՆՃԵԱՆ ԵՒ Մ. ԵՒ Հ. ԱՐՍԼԱՆՇԵԱՆ ԳԵՄԱՐԱՆՆԵՐ

Նշան Փայանձեան ձեռնարանը վերածել մշակութային կեդրոնի, վայն օժտելով գրադարանով, պատկերասրահով եւ մշակութային հետազոտական օրագրի մը գործադրութեան կարելիութիւններով: Մ. Ե. և Հ. Արսլանեան ձեռնարանի հայեցի դաստիարակութիւնը ալ անելի արարակողնու համար, անհրաժեշտ է վերանայնորութեան ենթարկել կիրառուած կրթական օրագիրները եւ հայերէնի դասագիրքերը:

ՄԱՐՍԵՅԻ ԳԵՄԱՐԱՆ

2003-2004 տարեշրջանը յայտարարել Մարսէյի ձեռնարանի շինարարական աշխատանքներու տարի եւ շարունակել հանգանակիչ յանձնախումբին կողմէ ձեռնարկուած դրամատարարը՝ ապահովելով նաեւ քոյր եւ այլ կառույցներու օժանդակութիւնն ու գործակցութիւնը:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Համափիւռքեան առումով քարոզչական աշխատանք տանել, Հինարկի ինքնաբաւ դարձնելու համար, ապահովելով նիւթական արհիւները: Նաեւ աշխատանք տանել ներգրավելու համապատասխան ուսանողներ՝ Սփիւռքի վասակայն շրջաններէն: Շարունակել գործակցութիւնը Երեւանի Պետական համալսարանին հետ:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՒ ՏՊԱՐԱՆ

Հետապնդել տպարանը անելի եւս շահութաբեր ձեռնարկի վերածելու հետադարձը:

Հրատարակչականի եւ գրախանութի գրացուցակը վերանայնելու համարանցի վրայ, որպէսզի դիրքանայի հրատարակութիւններու վաճառքն ու ցրումը:

ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՆԱԿ

Շարունակել վայն կազմակերպել ամէն ամառ՝ Լիբանան (Նշան Փայանձեան ձեռնարան) կամ Հայաստան:

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ժողովը բժախնդրութեամբ վերամշակեց Համազգայինի ընդհանուր կատնագիրը, շրջաններէն եկած առաջարկներուն հիման վրայ, ու յաւելեալ դիրքներ ընծայեց շրջաններուն՝ իրենց ներքին կատնագիրները պատշաճացնելու տեղական կարիքներուն եւ անելի արդիական գործելաձեւ որդեգրելու համար:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐ.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Պէյրուս, 28 Ապրիլ 2002

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ «ԱՀԱՔԵԿՉԱԿԱՆ...»

Շարունակում 3րդ էջէն

Ե. Միութեան քայլը նշանակալից ձեւք մըն է ՕԹԱՆԻ անդամ թուրքիոյ, որ Ե. Միութեան թեկնածու մըն է, եւ Իրանի, որուն հետ Պրիւք-նէլ հետզհետէ աւելի սերտ կապեր կը մշակէ:

Այսուհանդերձ, դիւանագետները յայտնած են, թէ «ախաբեկչական» որակում պիտի չտրուի Իրանի Ընդդիմադրութեան Ազգային խորհուրդին, որ Ժողովուրդի Մուճահիտին Կազմակերպութեան քաղաքական թեւն է:

Յանկին մէջ չ'իյնար նաեւ արմատական Պաղեստինի Ազատագրութեան Ժողովրդային Ճակատը (ԷՖ. Փէ. Էլ. Փէ.), որուն անդամները գործուն մասնակցութիւն կը բերեն իսրայէլեան գրաւումներուն դէմ ներկայ պայքարին մէջ:

ՔԱԿԵ ԶՈՒՇԱՅՈՒՄ

ՔԱԿի ղեկավարներ պզուշացուցած են եւրոպացիք, կազմակերպութիւնը արգիլելէ, ըսելով, որ անիկա պղտքին մէջ ապրող բազմաթիւ քիւրտերու մօտ գայտակցութեան պացուցում պիտի յառաջացնէ:

Անոր անունը անցեալ Դեկտեմբերին մշակուած Ե. Միութեան առաջին ցանկէն դուրս ձգուած էր:

ՔԱԿ այս ամիս որոշած էր իր անունը փոխել, սակայն թուրքիա յայտնած է, թէ կը շարունակէ խմբակը «ախաբեկչական» նկատել:

Քիւրտ ըմբոստներ յայտնած են, թէ քայլը կրնայ վիճելու մղել դէպի ռազմաճակատ՝ չքաջակերելով տիպոկը:

ԵԱՄԵՐ ԱՐԱՖԱԹԻ ԱՐԳԵԼԱՓԱԿԱՆ...

Շարունակում Ա. էջէն

Արաֆաթ ըսաւ, որ իսրայէլեան բանակը շրջանէն հեռանալէ առաջ, իր նստակայանի շուրջ գտնուող երեք շէնքեր ակնհայտաբար են: Ան աւելցուց, որ բանակին քանդած երեք շէնքերը պաղեստինեան պահակազուղին, Այսրյորդանանի հրամանատարութեան մամար ալ նիւթական օժանդակութիւն պիտի պահանջէ Միացեալ Նահանգներէն: Իսրայէլի վարչապետը ըսաւ նաեւ, որ ախաբեկչութեան դէմ պայքարելու համար, պահանջեալ հարկին պիտի դիմէ Այսրյորդանանի դէմ պիտուորական գործողութիւններու:

ԲԵՆՈՒՄԵՆԻՐ ԲԵՐՈՒՆԵՆԻ ԵՒ ԿԱԶԱՅԻ ՄԵԶ

Իսրայէլացի պիւտուրներ պաղեստինցի մը սպաննեցին եւ երկու ուրիշներ վիրաւորեցին: Բեթլեհեմի պաշարուած եկեղեցիին մէջ: Բանակին մէջ բայերը յայտնեց, որ իսրայէլացի պիւտուրները քանի մը վիւնտայն նկատած են եկեղեցու բակին մէջ եւ կրակ բացած անոնց վրայ: Բանքերը աւելցուց, որ վիւնտային դիւան յանձնուեցաւ պաղեստինեան Կարմիր Մահիկին, իսկ երկու վիրաւորներն ալ իրանահանց փոխադրուեցան: Եկեղեցիին մէջ վատնեց չէթէ շարժումի պատուիրակը ունի: Դեկտեմբերէն ի վեր, Արաֆաթ արգելափակած էր Ռամալլայի մէջ: Շարուն երէկ յայտնեց, որ Արաֆաթ կրնայ արտասահման մեկնել, սակայն Իսրայէլ չ'երաշխարհեր անոր վերադարձը: Շարուն շեշտեց, որ Իսրայէլ չի կրնար ըսել, որ Արաֆաթ կրնայ ձեւմորդել ու վերադառնալ, որովհետեւ ամէն ինչ կախեալ է ձեւմորդութեան ընթացքին պատահելիքէն: Ան աւելցուց, որ անցեալին, ամէն անգամ որ Արաֆաթ արտասահման մեկնած է, ախաբեկչութեան նոր պիք մը թափ ստացած է Իսրայէլի դէմ:

Միւս կողմէ, Շարուն յայտնեց, որ ապահովութեան նոր օրագիր մը պիտի ներկայացնէ Միացեալ Նահանգներու նախագահ ձեռն Պուշին, որուն հետ հանդիպում պիտի ունենայ յառաջիկայ շաբթուան ընթացքին: Շարուն ըսաւ, որ բաւական լուրջ ծրագիր մը պիտի ներկայացնէ

Բեթլեհեմի եկեղեցու տպարանը յուժեղու նպատակով Յովհաննէս Պողոս Բ. պապը կարտիսայ Ռոմըր Էջեկարայը ուղարկած էր Իսրայէլ: Էջեկարայ տեսակցութիւն ունեցաւ Իսրայէլի նախագահ Մոշէ Բալաքի հետ: Ան տեսակցութիւն մը կը օրագրէ նաեւ Արաֆաթի հետ: Կապայի մէջ 11 ամսեայ պաղեստինցի աղջընակ մը սպաննուեցաւ

Չորեքշաբթի օր, երբ իսրայէլեան հրատարակչական կազմակերպութիւնը վրայ: Անհատներ յայտնեցին, որ բնակարանը կը գտնուի «Ռաֆաթ» գաղութակայանին մէջ: Աղջընակին սպանութիւնը բախումներ հրահրեց պաղեստինցի վիւնտայններու եւ իսրայէլացի պիւտուրներու միջեւ: Ռաֆաթի ներխուժումին սպաննուեցան երեք այլ պաղեստինցիներ: Բանակը սակայն վերստին շեշտեց, որ քաղաքայիններու վրայ կրակ չի բանար:

Իսրայէլեան ուժեր երէկ ներխուժեցին նաեւ Թուրքարմ, ուր խուլարկութիւններու ենթակեցին բնակարաններ եւ միկիթներ: Իսրայէլեան ուժերը ձեռքարկութիւններ ալ կատարեցին պաղեստինցիներէն: Բանակը յայտնեց, որ հինգ հոգի ձեռքարկուած է:

ԾԵՆԻՍ ԱՍՍԻՆ ԸՆԴՈՒՄԻՆ ՊԻՏԻ ԶԿԱՏԱՐՈՒԻ

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոնֆի Անան Չորեքշաբթի օր յայտարարեց, որ հրատարակչական շեշտեց, որ իսրայէլեան ուժերը ձեռքարկութիւններ ալ կատարեցին պաղեստինցիներէն: Բանակը յայտնեց, որ հինգ հոգի ձեռքարկուած է: Կատարութեան ծրագիրէն, որովհետեւ կարելի չէ եղած համաձայնութիւն մը գոյացնել, նել Իսրայէլի հետ: Անան ըսաւ, որ Իսրայէլի հաստատած պայմանները անկարելի դարձուցին առաքելութեան յաջողութիւնը: Անան ժրնեի մէջ սպասող պատուիրակութեան քան անդամներէն պահանջեց վերադառնալ:

Անանի որոշումը իրարանցում ստեղծեց Ապահովութեան խորհուրդին մէջ, որուն 15 անդամները Չորեքշաբթի գիշեր չ'յաջողեցան վերակազմութեան մը յանգի: Ամերիկացի պատուիրակը ցաւ յայտնեց, որ Իսրայէլ չէ ընդունացած Ապահովութեան խորհուրդի որոշումը: Անան նմանակ մը ուղարկած էր Ապահովութեան խորհուրդին՝ բացատրելու համար, թէ ինչու՞ հրատարակչական շեշտեց, որ ժեհիւ ուղարկելու ծրագիրէն: Անան իրտել տուաւ, որ ժեհիւն մէջ օրըստօրէ արձանագրուող փոփոխութիւնները դժուար պիտի դարձնեն հետեւեալ փոփոխութիւնը՝ հաստատելու համար, թէ ինչ պատահած է գաղութակայանին մէջ՝ իսրայ

ՀՐԱՏՈՒ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ...

Շարունակում 3րդ էջէն

«Տեղեկատու աղբիւրներուն կը պարտադրուի, որ կողմնորոշուին եւ քարոզչութիւնը առաջնաճիւղ տեղ կը գրան բաղդատած իրականութեան», կ'ըսէ խմբակը:

Անոր տեղեկագիրը կ'ամրապնդէ այլ խմբակի մը՝ ամերիկեան Թղթակիցներու Պաշտպանութեան Յանձնախումբին մէջ պատգամը: Անիկա անցեալ ամիս յայտնած էր, թէ աշխարհի տարածքին լրագրողներ կը դիմագրաւեն «մամլոյ պատուութեան ընդհանրական տագնապ մը», իբրեւ հետեւանք՝ ախաբեկչութեան դէմ պատերապմին:

ԱՆԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ...

Շարունակում Ա. էջէն

Թացքի առիթ պիտի տրուի, որովհետեւ երբ ժողովուրդները դադրին Հաւատարմ գետուծիներէն կարողութեան եւ միջազգային որոշումներու պարտադիր գործադրութեան, վերստին պիտի տիրէ անտառի օրէնքը, «մինչ նման բան այս դարուս անընդունելի գետուծեանց համար»:

Նախագահ Լաճուտ երէկ ընդունեց մամլոյ եւ խմբագիրներու սենտիքաներու նախագահ Մոհամէտ Պապլայէքին եւ Մըլէհմ Քարամը, Լիբանանի մէջ գումարուող թշկական արաբական խորհրդատուական մասնակցողներու եւ արքա - եւրոպական սկառուական բանակուծին մասնակցողներու պատուիրակութիւնները:

Նախագահ Լաճուտ նաեւ ընդունեց բանակի հրամանատար գործ. Միշէլ Սլէյմանը, Երեսփոխան Անթուան Հատտարը եւ Պէյրութի սակարանի յանձնարարական Ֆատի Խալաֆը:

խախտ կը նկատուի, այն օրերուն, երբ բանակը պիտուորական փակ գոտի յայտարարած էր գաղթակայանը:

ՄԱԿի մէջ պաղեստինցի դէտ Նասէր Քիտուա դատապարտեց Իսրայէլի կեցուածքը, դիտել տալով, որ իսրայէլեան բանակը պատերապմական ամէն ձեւի ոճի գործեց ժեհիւնի մէջ՝ հրթիռներ արձակելով քաղաքայիններու բնակարանները: Բանակը յայտնեց, որ իսրայէլեան ուժերը ձեռքարկութիւններ ալ կատարեցին պաղեստինցիներէն: Բանակը յայտնեց, որ հինգ հոգի ձեռքարկուած է:

Պուշ յայտարարութիւն կու գար այն պահուն, երբ Քոնկրէսի անդամներ աշխատանք կը տանին որդեգրելու բանաձեւեր, որոնք պօրակցութիւն կը յայտնեն Իսրայէլի եւ կը դատապարտեն Արաֆաթը, իբրեւ հովանաւոր ախաբեկչութեան: Պուշ կոչ ուղղեց Քոնկրէսին՝ յետաձգելու այս քայլը, որ կ'ակնանահարէ ամերիկեան խաղաղարարները:

Պուշ անցեալ շաբթուան մէջ տեսակցութիւն ունեցած էր Անտուանի Արաֆաթի գահաժառանգ իշխան Ապտալլայի հետ եւ պաշտօնատարներու համաձայն, անոր խորհրդարկցած ու համաձայնած միացեալ ճիշդութիւն մասին, որպէսզի մեղմացնեն յարուածութիւնը Միշէլ Արեւելի մէջ: Ճիշդութիւն համակարգումին առաջին շաբթեայ արդիւնքը Արաֆաթի կեդրոնատեղիին պաշարման վերաբերման էր: Սակայն Սպիտակ Տան բանքեր Արի Ֆլայշըր հեղքեց այն լուրերը, ըստ որոնց, Պուշ եւ Ապտալլա համաձայնած են «գործերը բաժնուելու»:

Միւս կողմէ, Սպիտակ Տունը երէկ կոչ ուղղեց պաղեստինցիներուն, Իսրայէլի եւ արաբ ղեկավարներուն՝ յաւապէս քննելու հարցերը եւ մտածելու, թէ ինչ քայլերու պէտք է ինչի մասին յառաջադրուի: Ապտալլայի մէջ ինչի մասին յարուածութիւնը քարոզչութեան շեշտեց, որ ժեհիւնի մէջ ջարդ չէ գործուած:

Միւս կողմէ, մարդկային իրաւանց պաշտպան Հիւմիս Ռայց Ուոլի կողմէ հրապարակուած տեղեկագիր մը կը նշէր, որ ժեհիւնի գաղթակայանին մէջ ջարդ գործուած ըլլալու փաստ չէ գտած, սակայն յստակ է, թէ իսրայէլեան բանակը պատերապմական ոճի գործերը գործած է: Տեղեկագիրը կը նշէր նաեւ, որ իսրայէլեան ուժերուն կողմէ պատնուած պաղեստինցիներուն կարգին են քաղաքայինները:

ՈՒՄԵՆԿՈՐԸ ԵՒ ՌԻԱՏ ԿԸ ԳՈՐԾԱԿՑԻՆ

Նախագահ ձեռն Պուշի կատարարութիւնը յայտնեց, որ Անտուանի Արաֆաթի հետ խմբակարգ ճիշդութիւն մը ապահովելու համար պաղեստինեալիսրայէլեան տագնապին: Ուաշինկթոն սակայն տակաւին կան:

(ՌՈՅԹԸԸ)